# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻՐ ՎԼԱԴԻՄԻՐ ՅԱԿՈՎԼԵՎԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՆԱԽԱՆԳԱՊԵՏՆ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ, ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻՐ ՎԼԱԴԻՄԻՐ ԵԱԿՈՎԼԵՒ, ՈՐ Ի ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹԻՒՆ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր ջերմ ողջոյններն ու սրտաբուխ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ հայ ժողովրդի ու Եկեղեցու հանդէպ Ձեր ցուցաբերած վստահութեան եւ բարի ու ազնիւ վերաբերմունքի համար:

Երկդարեայ փառապանծ պատմութիւն ունի հայ համայնքը Ռուսիոյ հռչակաւոր Սանկտ Պետերբուրգ քաղաքում: Վայելելով բարեհաճութիւնը հաւատաւոր ռուս ժողովրդի եւ տեղական իշխանութիւնների, հայորդիք հնարաւորութիւն են ունեցել, որպէս լիարժէք քաղաքացիներ, եկեղեցի ու դպրոց հիմնելու, կրթամշակութային ու բարեսիրական բազմաթիւ հաստատութիւններ բացելու, հայալեզու տպագրութիւն զարգացնելու:

Մեծարգոյ պարոն Եակովլեւ, ուրախ ենք մեծապէս, որ այսօր եւս բարեփոխուող Ռուսաստանում Սանկտ Պետերբուրգի յարգարժան իշխանաւորները, Ձեր բարձր գլխաւորութեամբ, ջերմ ու սիրալիր նոյն վերաբերմունքն են ցուցաբերում մեր ժողովրդի զաւակաց հանդէպ, ինչին Մենք տեղեակ ենք ինչպէս Մեր բազմաթիւ այցելութիւններով, այնպէս եւ հայ համայնքի հոգեւոր հովիւ, Հոգեշնորհ Տ. Եզրաս աբեղայ Ներսիսեանի միջոցով: Դրա արդիւնքն է աշխոյժ ռիթմով տրոփող համայնքային կեանքը, այս օրերին վերաբացուող Ս. Կատարինէ եւ գործող Ս. Ցարութիւն հայոց եկեղեցիները, հրատարակուող պարբերական մամուլը, Սանկտ Պետերբուրգի Արեւելագիտութեան ինստիտուտում հիմնադրուած հայագիտական ամբիոնը, Հայ Եկեղեցու գանձերի ցուցադրումը Էրմիտաժի հանրայայտ սրահներում եւ այլն:

Հայրապետական մեր այս Կոնդակով Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ զոհունակ սրտով շնորհում Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Բարին Աստուած հանապազ աջակից ու օգնական լինի Ձեզ, Ձեր ընտանեաց անդամներին եւ Սանկտ Պետերբուրգի նահանգի ողջ բնակչութեանը՝ խաղաղ երկնքի ներքոյ պարգեւելով երջանկութիւն, ամենայն բարիք ու յաջողութիւն:

Մաղթում ենք Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ մնայուն ձեռքբերումներ՝ ի փառս Ռուս ժողովրդի եւ պետութեան:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալք ի Մէնջ». ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 6-ն Յուլիսի
ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 15